




ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻ


Որ խմբին է պատկանում ձեր արյունը «Ա», «Բ», թե՛ «ԱԲ» կամ գուցե «Զրո»։ Դուք այդ չգիտեք։ Սպասեցեք մի րոպե։ Հիմա կստանաք պատասխանը։ Բայց չվախենաք, այլևս այդ նպատակով ձեզանից արյուն չեն վերցնի։ Ազգային մրցանակի լաուրեատ, պրոֆեսոր Օտտո Պրոկոպի (Բեռլին) նոր մեթոդով արյան խմբի որոշումը կատարվում է անմիջապես աչքի մեջ։ Անալիզի ժամանակ մանրադիտակի տակ գրտնըվում է միայն արտասուքը։

Այն ժամանակից ի վեր, երբ 20-րդ դարի սկզբին ավստրիացի բակտերիոլոգ Կարլ Լանդշտայները հայտնաբերեց մարդկային արյան տարբեր խմբերը, արյան անալիզը հանդիսանում է գրեթե ամեն մի հիվանդության ախտորոշման կարևորագույն և անհրաժեշտ միջոցը։

Մինչև այժմ խուճը որոշելու համար հիվանդից արյուն էին վերցնում։ Դա ոչ այնքան ցավոտ, որքան տհաճ է շատերի համար։

Ազգային մրցանակի լաուրեատ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օտտո Պրոկոպը, որն արդեն տարիներ շարունակ Բեռլինի բժշկական ինստիտուտի լաբորատորիաներում զբաղվում է արյան հետազոտությամբ, գտավ արյան խմբերը որոշելու մի նոր, բոլորովին անցավ մեթոդ՝ անալիզ անմիջապես աչքի մեջ։

Ու թեև պրոֆեսոր Պրոկոպի նոր մեթոդը արդեն մոտ է կիրառմանը, սակայն դեռևս անհրաժեշտ են հետագա ուսումնասիրություններ, որոնք թույլ կտան գործ-



նականում կիրառել այդ մեթոդը արյան որոշ հիվանդությունների բուժման համար:

«Այն բանից հետո,— ասում է պրոֆեսոր Պրոկոպը,— երբ մեր աշխատակիցներն ուսումնասիրեցին մարդու լորձուքում եղած հակամարմինների արտադրման պատճառները և կարողացան ապացուցել, որ այդ արտադրումը կախված է արյան խմբից, մենք ենթադրեցինք, որ իհարկե որոշ հարաբերակցությամբ, հակամարմիններ են պարունակում օրգանիզմի նաև սյուս հեղուկները: Այդ բանի հաստատումը մենք գտանք արտասուքի մեջ:

Անալիզը չափազանց պարզ է: Զննվողի մի աչքի մեջ կաթեցնում են կերակրի աղի լուծույթ, որն իր մեջ պարունակում է կախված վիճակում գտնվող «Ա» խմբի արյան մարմնիկներ, սյուս աչքի մեջ՝ «Բ» խմբին պատկանող արյան մարմնիկներ պարունակող լուծույթ: Մանրադիտակի տակ արտասուքը զննելիս նկատվում է հետևյալը. եթե մարդու արյունը պատկանում է «Ա» խմբին, ապա նա ունի «Բ» հակամարմիններ, հետևաբար «Բ» խմբի արյան մարմնիկներ պարունակող լուծույթը պետք է մակարդվի: «ԱԲ» խմբի արյուն ունեցողը փորձին չի հակազդի:

Այս տեսությունը բազմիցս հաստատվել է, այնպես որ հնարավոր է արյան խմբերի որոշումը առանց արյուն վերցնելու:

Այդ նոր հայտնագործությունն, անշուշտ, կօգնի բժշկությանը հետագա հետազոտություններում: Առայժմ սրանք միայն լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքներ են, սակայն վաղը գործնականորեն կկիրառվեն բժշկության որոշ բնագավառներում: